ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

< 8 > ապրիլի 2016թ. N 53-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԲՅՈՒՐԵՂԻԿ ՄՈՒՇԵՂԻ ՀՈՎԵՅԱՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի, 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) կարգի» 14-րդ կետի պահանջը, Հայաստանի Հանրապետության «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 7-ի N 4 որոշումը և նույն հանձնաժողովի եզրակացությունն ու Բյուրեղիկ Մուշեղի Հովեյանի դիմումը՝

*կարգադրում եմ՝*

1. 2016 թվականի ապրիլի 8-ից Հայաստանի Հանրապետության «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակել Բյուրեղիկ Մուշեղի Հովեյանին՝ կնքելով աշխատանքային պայմանագիր երեք տարի ժամկետով, համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում [illegible]ագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ